

Ջ Ի Վ Ա Ն Ի
(Մենդյան 150-ամյակի առթիվ)

Շ. Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ջիվանին ավանդական հայ աշուղի այն հավաքական կերպարն է, որն իր ղեղարվեստական հարուստ ժառանգությամբ եկավ հարստացնելու հայ աշուղական դրականությունը՝ հավատարիմ մնալով Արևելքի և հայրենի աշուղական սյուրեալի դասական ավանդներին։ Հանդես դալով անցյալ դարի 70—80-ական թվականներին, Ջիվանին յուրովի արձագանքեց ժամանակի հասարակական-քաղաքական և սոցիալ-պատմական իրադարձություններին՝ դառնալով ժողովրդական դադափարների կրողն ու մարմնավորողն աշուղական երգարվեստի և դրականության մեջ։

1

Սիւլբալաքի շրջանի Կարծախ գյուղը ոչնչով առանձնապես հայտնի չէր լինելու, և թե՛ անտեղ, 1846 թ., չծնվե՛ր մեր ժողովրդի մեծ զավակներից մեկը, աշուղ Ջիվանին։ Բասենից դաղթած Բենկոյնից Գասպարի թոռն էր նա, Ստեփանի չորրորդ դավակը։ Դառն ու ողբերգական եղավ Սերովբի (այսպես էր Ջիվանու ծննդյան անունը) մանկությունը։ Վեց տարեկան էլ չկար, երբ օտարություն մեջ մեռնում է հայրը՝ կնոջ խնամքին թողնելով հինգ անօգնական որդի երեխաներ։ Բայց ավելի դժվարը մորից բաժանվելն էր, որին հոր-կղբային ամուսնացնում է հարեան Տատեղից մի գեղջուկի հետ։ Իսկ ուշիմ և հետաքրքրասեր Սերովբեին հորեղբայր Մարտիրոսը հանձնում է գյուղի խալֆույական դպրոցը, ուր հաղիվ գրեյ-կարդալ է սովորում։ Ուսման մեջ հեռանկար շտեմնելով, հորեղբայրը Սերովբեին հանում է դպրոցից ու կարդում հորթարած։ Ճանապարհացր մի կռան տակ, փոքրիկ սաղը՝ մյուս, Սերովբեին ամբողջ օրը շրջում է դաշտերում և հորթարած րնկերներին ղվարձագնում գեղջկական երգով ու երաժշտությամբ։ Համագյուղացի աշուղ Սիւլիս խորհուրդ է տալիս Մարտիրոսին, որ երաժշտական մի գործիք գնի Սերովբի համար և տա իր մոտ աշակերտության։ Ղարա Ղազարը (Սիւլին) թե՛ և ճանաչված աշուղ, բայց քիչ բան կարող էր սովորեցնել իր հմուտ ու շրջահալաց աշակերտին։ Բայց շուտով մի բարեպատեհ առիթ բոլորովին փոխում է Սերովբեի կյանքի ուղին։ Ընկերանալով իրենց գյուղ ժամանած նորբայազետի երիտասարդ աշուղ Սազալու հետ, Ջիվանին 1869 թ. մեկնում է Թիֆլիս։ Այստեղ Ս. Գևորգ եկեղեցու մոտ դառնում է մի վանեցի հայի (Կարապետ Սոնալանց) սրճարանում մեկ տարի աշխատելուց հետո, Ջիվանին հրավեր է ստանում այլքսանդրապոլի սրճարանատեր Տալյաններից։ Ջիվանին հրաժեշտ է տալիս Թիֆլիսի իր երկրպագուներին և իր գործընկերոջ՝ աշուղ Սազալու հետ, հավանաբար 1870 թ., մեկնում Ալեքսանդրապոլ։ Ալեքսանդրապոլիցիները զրկաբաց են ընդունում իրենց հայրենակից աշուղին, իսկ Տալյան եղբայրները նրա առաջ բաց են անում իրենց տան դռները։ Շուտով նրանց միջև ստեղծված մտերմությունը վեր է ածվում բարեկամության։ Ջիվանին ամուսնանում է սրճարանատիրոջ՝ Հովհաննես Տալյանի դստեր՝ Աշխենի հետ և մտերմական սերտ կապ հաստատում վերջինիս եղբայր Մկրտիչի՝ աշուղ Ջամալիի հետ։ Տալյան գերդաստանն այսպիսով մեկենասի դեր է կատարում Ջիվանու

համար՝ ծնելով իր հերթին բազմաթիվ ընդունակ ու տաղանդավոր զավակներ՝ Մկրտիչ Տալյան (Ջամալի), Գրիգոր Տալյան (Շերամ), Վարդգես, Վազգեն, Շարա Տալյաններ։ Ծանոթանալով Ջիվանու ստեղծագործությանը, դրժվար չէ նկատել, որ նա քաջատեղյակ էր հայ ժողովրդի անցյալի ու ներկալի համարյա բոլոր մեծ ու փոքր իրադարձություններին, հիանալի գիտեր իր ժողովրդի մտավոր կյանքը (գրականություն, երաժշտություն, թատրոն) և որ կարևոր է՝ գործուն ու ակտիվ մասնակցություն ունենալ ազգի նաև առօրյա կյանքին։ Նկատենք, որ Ջիվանուց դեռ շատ առաջ մեր աշուղները թուրքերենի հետ միասին ստեղծագործում էին նաև հայերեն, բայց այդ արվում էր կարծես պարտքի մի որոշ զգացումով, իսկ երբեմն էլ այս կամ այն հայրենասեր անհատի ու գործչի թելադրանքով (Պատկանյան, Աղալան, Շիրին)։ Եվ չի կարելի ասել նաև, թե Ջիվանու ժամանակներում չկալին ալլևա զուտ թուրքերեն ստեղծագործող հայազգի աշուղներ։

Բայց Ջիվանին առաջինն էր, որ հիմնավորապես լուծեց լեզվի խնդիրը՝ հօգուտ հայերենի։ Նա տեսավ, որ հայերեն երգերը այն ակնհայտ առավելություն ունեն, որ մատչելի են շատ ավելի լայն շրջանների և զարգացման ավելի լայն հեռանկար ու հնարավորություններ են ընձեռում։ Եվ նա հայերենին դիմեց մի առանձին նվիրումով՝ զգալով «բաղցր ու ճոխ» հայերենի ակնհայտ առավելությունները։

Հայոց քաղցր ու ճոխ լեզու,

Անուշիկ բառերուդ մատաղ,

Թե՛ հին, թե՛ նոր, լավ պտղատու

Քո տնկած ծառերուդ մատաղ։

Եվ ահա Ջիվանու գլխավորած աշուղական խումբը, իսկ այնուհետև նաև բոլոր հայ աշուղները, ժողովրդի սրտից ու հոգուց դուրս են վանում օտարաբանությունը և նրա տեղը հավատ, սեր արթնացնում մայրենի լեզվի ու գրականության հանդեպ։ Նույն այդ նպատակով Ջիվանին իր ելույթների ժամանակ առանձին տեղ էր հատկացնում ինչպես իր նախորդ նշանավոր աշուղներին՝ Սայաթ-Նովայի, Միսկին-Բուրջի, Շիրինի, այնպես էլ մեր դասական հեղինակներին՝ Աբովյանի, Նալբանդյանի, Ռաֆֆու, Պատկանյանի, Հովհաննիսյանի, Թումանյանի տեքստերով երգերի կատարմանը։

1880-ական թթ. արդեն Ջիվանին այնպիսի հեղինակություն էր, որ ոչ միայն ռամիկ, այլև գրական բարձր շրջաններում էլ նրա հասցեին լսվում էին միայն գովեստի ու հիացական խոսքեր։ Ընդ որում, հիացողների մեջ էին այնպիսի հսկաներ, ինչպիսիք էին Պատկանյանն ու Թումանյանը։

Ջիվանու մասին իոսսելիս հարկ է պարզել մի էական հարց. ե՞րբ է սկիզբ առել և ի՞նչ ճանապարհով է ընթացել հայ-աշուղական գրականությունն ու երգարվեստը։ Ընդունված է կարծել, թե հայ-աշուղական գրականությունն ու երգարվեստն ունի շուրջ երեք-չորս հարյուր տարվա սլաֆություն։ Այդ կարծիքին էին մեր գրեթե բոլոր թե՛ հայտնի և թե՛ շարքային աշուղագետները՝ Գ. Ախվերդյանից մինչև Գ. Լևոնյան և Գ. Թալերդյան։ Երկար ու ձիգ տարիների մեր պրպտումները ցույց տվին, որ այդ տարիքն առնվազն մեկ հարյուրամյակ պետք է ետ տարվի, որովհետև մեղ հայտնի առաջին հայ ականավոր աշուղը ո՛չ թե Նահապետ Քուչակն է, այլ նրանից առնվազն մեկ հարյուրամյակ առաջ ապրած և ստեղծագործած Ղուլ-Օղլի Երզնկացին, որի գրչին պատկանող «Թուրները» խորագրով երգն էլ տիպիկ աշուղական ստեղծագործություն է։ Նա մեզ հայտնի առաջին հայ նշանավոր աշուղն է, որ ապրել և ստեղծագործել է ոչ թե XVI, այլ՝ XV դարում։

Կես հազարամյա պատմություն ունեցող հայ աշուղական գրականությունն ու երգարվեստն, ուրեմն, ծաղկել է տարաբախտաբար սլաֆական թուրքական տիրապետության ներքո։ Հայազգի մեր համարյա բոլոր աշուղներն ապրել ու գործել են օտար այդ տիրապետության պայմաններում՝ շրջանցել չկարողանալով հավանաբար օտարների ոչ միայն կամքն ու ցան-

կությունը, այլև նաշակն ու նախասիրությունը, այդ պատճառով էլ հենց Ղուլ-Օղլի նրանց հետ սկսած, ընդհուպ մինչև Շիրինն ու Զիվանին, մեր աշուղներն ստեղծագործել են թուրքերեն։ Այստեղից էլ բազմաթիվ հալաշուղներ պարսկա-արաբա-թուրքական անուններով՝ Նիրանի, Քումալի, Մալուլ, Մալիֆ, Զարդար, Քեշիշ-Օղլի, Թուրքար, Թուրինջ և այլն։ Հիշենք նաև Արսլանի կարևոր վկայությունը. «Լավ դիտելի, որ թե՛ օսմանլի, թե՛ ղզլաշի երկրում ինչքան երևելի, խելոթ. հունարով մարդ են եղել, ինչքան խանի, շահի, սուլթանի դռներին սիրական աշուղ, լավ խաղ ասող, ոտանավոր շինող մարդ են եղել, շատերը հայ են։ Մենակ Քեշիշ-Օղլին, Քոռ-Օղլին բավական են, որ ասածս սուտ դուրս չի գա»։

Այսպիսով առկա է նաև աղղաշին պատկանելության ամենևին էլ ոչ դուրին ինդիք, ընդամենը՝ ինչպես առանձին աշուղների, այնպես էլ նրանց նախասիրած զրեյառների, մեղեդիների ու տաղաչափական կանոնների պրոբլեմը։ Հիրավի Ովթե՛ր են ինչպես աշուղական տաղաչափության, երգ-երաժշտության, այնպես էլ արևելյան սիրավեպերի հեղինակները, հալե՛րը, ադրբեջանցիները, թե՛ թուրքերը։ Ես, օրինակ, այն համոզման եմ, որ արևելյան դասերը ուրիշ սիրավեպերի («Քյոռ-Օղլի», «Աշուղ Ղարիբ», «Ամրահ և Սալվի») հեղինակներն իրենք՝ հայազգի աշուղներն են։

Վերջերս մեր կողմից տպագրած արևելյան սիրավեպերի մեկ հատորյակի («Զարթոնք», 1992) առաջաբանում ես խոսել եմ «Աշուղ-Ղարիբ» և «Քյոռ-Օղլի» հեթաթ-սիրավեպերի հայրենական (այսինքն հայկական) լինելու հարցի շուրջ՝ մատնանշելով երկու այսպիսի՝ առարկություն հնարուցող փաստ։ Աղղաշի մեր ովթե՛ր կարող էին լինել աշուղ Ղարիբն ու Քյոռ-Օղլին։ Իհարկե հայեր, որովհետև թուրքը կամ սաճիկը կարող էր դարձի լինել, այսինքն իր հայրենի հողից հեռանալ և օտար երկիր դարձնելու զանազան պատճառներով։ Երբ էլ XVI—XVIII դդ. (երբ ստեղծվել են այդ սիրավեպերը) իր այդ ո՛ր հայրենիքից այնտեղ օտարություն դնար, որ զեռ հալալ քրտինքով էլ փող վաստակեր ու դար իր սիրածին արժանանար, և ապրեր Բիֆլիսի կենտրոնում՝ Ս. Գևորգ կեղեցու հարևանությամբ։ Նույնն էլ Քյոռ-Օղլու պարագան էր։ Հայաստան աշխարհը, ուր որ ոտք դնես, կհանդիպես Քյոռ-Օղլու անունը կրող բերդերի ու ամրոցների, ճանապարհների ու սարերի, դարավանդների ու հարթավայրերի։ Պատահական կարող էր լինել այս ամենը։ Գուցա, Հալա-սին, որ բազմադարյակ էր այս ամենին ու գիտեր արևելյան սիրավեպերը՝ թե՛ թուրքերեն և թե՛ հայերեն, մի օր, երբ խոսք եղավ այդ մասին, ասաց. «Քյոռ-Օղլին ինքն է խոստովանում, որ ինքը «հավատափոխ եղած զյավուր է»։

Սույն հոդվածի բնույթն ու սահմանները թույլ չեն տալիս ծավալվելու։ Ասեմ, որ մեր աշուղները (Զիվանին, Զամալին, Սաղաշին, Խալաթը, Հովսեփ Ասլանյանը, այսինքն՝ բոլոր նրանք, ովքեր թարգմանել ու փոխադրել են արևելյան սիրավեպերը) ոչ միայն նույն կարծիքին ու համոզմանն են եղել, այլև դրանք դիտել ու համարել են հայրենի մշակույթ և ըստ այնմ էլ վարվել նրանց հետ, այսինքն՝ ոչ թե թարգմանել ու փոխադրել են, այլ՝ վերականգնել, ձևափոխել, լրացրել, հայացրել։

Զիվանին վճռորոշ դեր է կատարել նաև այս հարցում։ Նրա նախասիրած հեթաթները շորսն էին՝ «Աշուղ Ղարիբ», «Ասլի և Քյարամ», «Շահ-Իսմաշիլ» և «Լեյլի Մեհնուն», որոնք և փոխադրել է, մանավանդ առաջին երկուսը, և այն էլ այնքան կատարյալ, որ թվում է, թե դա է եղել նրա հիմնական անելիքը։ Յավութ, քիչ է զրվել այդ մասին։

Արժե առանձնացնել, ասենք օրինակ, «Աշուղ Ղարիբ» սիրավեպը։ Հիրավի, ո՛ր թուրքերեն բնագիրը և ո՛ր Զիվանու փոխադրածը։ Բնագրի 37 երգերի թիվը Զիվանին հասցրել է 65-ի, այսինքն՝ կրկնապատկել է՝ հորինելով միամամանակ բոլորովին նոր ու զմայլելի երգեր, ինչպես ասենք՝ «Մնաս բարով, Թավրիզ քաղաք», «Հորիվոնդ ամառտ, սարերդ մշուշ», «Եկա անցնելու քեզանից», «Երբ որ լինի դարնանամուտ նոր դարուն» և այլն։

Զիվանին սիրավեպն օժտել է նաև զուտ հայկական և նույնիսկ քրիստոնեական սյուժե պարունակող ինչ-ինչ դիպվածներով, որպիսիք չկային ու չէին կարող լինել բնագրում: Այս իմաստով ևս նա ուսուցչի դեր է կատարել իր գործընկերների՝ Սազալու, Զամալիի և նաև հետագա իր հետնորդի՝ Հովսեփ Ասլանյանի համար:

1895 թ. Զիվանին Ալեքսանդրապոլից տեղափոխվում և մշտական բնակություն է հաստատում Թիֆլիսում: Ի դեպ՝ հենց միայն իր բազմաճյուղյա տանիքի վիճակը բարելավելու և զավակներին կրթություն տալու նպատակով Զիվանին կարող էր դիմել այդ քաղաքին, այսինքն թողնել Ալեքսանդրապոլը, ուր այնքան ցերմ ու անմիջական էր աշուղական արվեստի և մանավանդ իր հանդեպ արհեստավորական քաղաքի վերաբերմունքը:

Չկար այլևս երբեմնի ուրախ ու զվարճասեր թիֆլիսցիներ: Մի հզոր ու աներևույթ ուժ կաշկանդել էր ի ծնե անբռնադատ նրա հոգին ու բազում հոգսերով լցրել նրա առօրյան: Այս ամենի վրա ավելանալու եկան նաև բռնություններն ազատ խոսքի ու գործի հանդեպ: Հասկանալի է, որ մի այնպիսի դյուրագրգիռ ու զգալուն մարդ, ինչպիսին Զիվանին էր, չէր կարող տանել այս ամենը: Ցարական սատրապ իշխան Գոլիցինը հրաման է արձակում հայկական դպրոցները փակելու և նույնիսկ եկեղեցական կալվածքներն ու գույքը խլելու մասին: Եվ ահա անվանի աշուղը հանդես է գալիս իր հռչակվոր «Ով անիրավ, անխղճմտանք» երգով: Մի անգամ «Թաղային ոստիկանները ներս մտնելով սրճարան և տեսնելով «հասարակ դասի» բազմաթիվ ունկընդիրներով շրջապատված Զիվանուն, արգելում են նրա երգն ու նվագը և գործիքը խլում ձեռքից»: Այս ամենից հետո և այս ամենից բացի, Զիվանին նաև վատառողջ էր: «Մոտ կես դար երգելուց ու կանչելուց սպառվել էին նրա ուժերը,—պատմում է աշուղի որդին՝ Գ. Լևոնյանը:—Շարունակ տաք ու պաղից նա ստացել էր թոքերի խրոնիկական հիվանդություն: 1900-ական թվականներին զգալի կերպով փոխվել էր, վաղահաս ծերությունը, հիվանդությունը մաշել էին նրան»: 1908 թ. հոկտեմբերին, Թիֆլիսի ժողովարանում, նա ունենում է իր վերջին հրապարակային ելույթը արտասահմանից ժամանած մի խումբ գրասեր հայերի պատվին կազմակերպված միջոցառմանը: Ուժասպառ, հոգնած ու դադրած Զիվանին անկողին է բնկնում: Ավելի քան հինգ ամիս տառապելուց հետո՝ 1909 թ. փետրվարի 24-ին, 63 տարեկան հասակում կնքում է իր մահկանացուն:

Անմիտ ճնճողուկը բազեի ճանկից

Ուզում է որս խլել, խելքի աշեցիք,

Կարծես ձանձրացել է գլխից-գանդից

Պատերազմ է մտել, խելքի աշեցիք:

...Հանցավոր հարուստը ուրախ խնդալով

Մեղքից ազատվել է մեծ գումար տալով,

Խեղճ մարդը սխալմամբ մի հավ գողնալով

Բանտի մեջ է փտել, խելքի աշեցիք:

Այս է աշուղ Զիվանին՝ իր ուրույն ոճով ու փիլիսոփայությամբ: Աշուղական երգի այս ձևին, որի երկրպագուն ռամիկն է, «անհաղորդ» պիտի մնար դժական բարձր շրջաններում փայլող բանաստեղծը: Մանավանդ որ միշտ էլ բավական ներհակ, եթե չասենք հակոտնյա պիտի լինեին պրոֆեսիոնալ բանաստեղծի ու աշուղի ոճական հնարներն ու նախասիրությունները: Ուստի տարբեր պիտի լինեին նաև նրանց ստեղծագործության թեմատիկ ընդգրկումը:

Իսկ ո՞րն է աշուղի նախասիրությունը. «Աշուղը,—գրում է Գ. Լևոնյանը,—բարձր, անհասանելի, անձեռահաս գաղափարների, օլիմպոսների, երեվակայությունների, օդային ամրոցների հետ գործ չի ունեցել: Նորա երգերի

և ասացվածքների նյութն է կազմել ժողովրդի ժամանակակից դրություները: Հիշտ այդպիսի մի աշուղի իդեալական կերպար էր հենց իր հայրը՝ աշուղ Զիվանին: Նա, որ քառասուն տարիներից ավելի ծառայեց իր ժողովրդին, նրա ձգտումների ու երազների թարգմանը լինելով, ուրիշ ոչ մի կերպ չէր կարող իր մասին խոսել, քան իր մեծ նախորդի՝ Սայաթ-Նովայի նման:

Սայաթ-Նովայի ասածի պես ազգի մշակ է երգիչը,
Հազար ցավով մարտիրոսված ճիշտ նահատակ է երգիչը:

«Անխարդախ, սրտով իստակ Զիվանին» շատ տական ու վրա արավ աշ-
խարհը, քննեց կյանքի շարն ու բարին և տեսավ, որ՝

Թույլերը պարտվում են, դորեղները դործը տանում,
Գոյություն կռվի միջի մեծը փոքրին է կլանում...

Այսպես ահա սկզբնավորվում և ձևավորվում է աշուղի դեմոկրատական աշխարհայացությունը՝ իր որոշ հիմքերն ունենալով անշուշտ նախորդ դարերի աշուղական պոեզիայում՝ սկսած հենց Սայաթ-Նովայի ժամանակներից:

Աշուղներն ընդհանրապես դեմոկրատներ են: Նույնիսկ պաշտոնյա, իշ-
խանավոր աշուղ Սեյադը (Պետրոս-Բեգի Մաղաթյանց) կամ ազնվական ըն-
տանիքի վավակ, գերբեմեղյի աշուղ Շահիր-Խաչատուրը, որ տնտեսապես խիստ ապահով վիճակում էին, հանդես եկան ոչ թե մեծատունների, այլ
ունևորկվածների անունից: Զիվանին առավել ևս, որովհետև ինքը ունեզրկ-
ված լինելով, իր ամբողջ կյանքն անց էր կացրել ամենահետին թշվառության
ու կարիքի մեջ:

Մեկ օր ուրախ, հինգ օր տրտում,
Կենտ մի օր կուշտ, տասն օր սոված...

Իմ պետք է տեսնել, թե որպիսի ցավով ու ափսոսանքով է խոսում Զի-
վանին դառոր դատող, դատարկ նստող շարքաշ մշակի մասին:

Բևե կրկով մեքրդ ծովեց, ինդճ մշակ,
Քեզ դառն տանջանքից ազատում չեղավ,
Մարդկության մեջ, ով կենդանի նահատակ,
Վերրիդ բուժիչ, ցավիդ փարատում չեղավ:

Ցավն էլ հենց այն է, որ աշխարհն այդպես անարդար է ստեղծվել: Հա-
րուստն աչք չի բացել կեր ու խումից, իսկ աղքատի որդին պատեսպատ է
ղարկվել իր օրվա ապրուստը հողալու համար:

Զիվանի, աշխարհը զորավորին է,
Վայելչություն, պատիվ քախտավորին է,
Ամեն երջանկություն ունեորինն է,
Պատեպատ է դիպչում աղքատի որդին:

Աշուղը չի վարանում զայրույթի իր խոսքն ուղղել իրենց ճակատի քըր-
տինքով և սուրբ ճանապարհով փող աշխատող մարդկանց թալանող, խար-
դախ ճանապարհով հարստության տեր դառած մեծատուններին, որոնց նա
պարզապես գողեր է անվանում:

Ճակատի բրտինքով, սուրբ ճանապարհով
Փող վաստակող մարդիկ բլերն են հիմա,
Փոքրերին դուրս են վռնել ուժով,
Անվանի գողերը մեծերն են հիմա:

Եվ ոչ թե շարքային մարդու սովորական նախանձով, այլ պարզապես շափ ու սահման չճանաչող անարդարության դեմ ծառանալով, Զիվանին նկատում է.

Մեկը ուտելուց կճաքի,
Մեկը անոթի կմեռնի...

Այս բոլորից հետո, մեր երգչին մնում էր ընդհանրացնել իր տպավորությունները, որ և անում է նա իրեն հատուկ սլատկերավոր հակիրճությամբ.

Հիանալի սիրուն աշխարհ, եղա դործիդ վերահասու,
Հարուստներու համար դրախտ, չքավորին դժոխք ես դու:

2

Այն, որ Զիվանին ասպարեզ եկավ ռուս-թուրքական պատերազմի տարիներին (1870-ական թթ. վերջին) ոմանց կարծիքով որոշիչ նշանակություն է ունեցել հայրենասիրական թեմատիկայի նկատմամբ Զիվանու ցուցաբերած բուռն հետաքրքրության գործում: Ինչ-որ չափով դա իհարկե ճիշտ է: Պատերազմը ոչ միայն Զիվանու նման «ի բնե հայրենասեր մեկին», այլև՝ մեր ժողովրդի բոլոր խավերին էլ կանգնեցրեց հայրենիքի հանդեպ սլարտքի ու պատասխանատվության զգացումի առաջ, երբ օրակարգի հարց դարձավ հայ ժողովրդի ազատագրությունը: Բայց անկախ հայրենասիրական զգացմունքների խմորման այսպիսի «արտաքին» դրդիչների էլ Զիվանին իր գործունեության վաղ շրջանում արդեն «պատրաստի» հայրենասեր էր՝ աշակերտը լինելով մի այնպիսի հայրենասեր աշուղի, ինչպիսին էր իր հայրենակից աշուղ Սիային, որի գաղափարական նախորդներն էին Շիրինի, Նիրանու, Ազբար-Աղամի նման երևելի աշուղները:

Ձեր էլ լրացել Զիվանու երեք տասնամյակը, երբ նա հրապարակ հանեց իր հուշավոր «Համոզմունքը» («Սոխակ Հայաստանի», 1875, № 3):

Վերահաս պատերազմը և մանավանդ մամուլում ու դրականության մեջ ծավալված հայրենասիրական պրոպագանդան հուժկու խթան պիտի լինեին, և Զիվանին ու իր արվեստակից ընկերները Բաֆֆուն ու Դամառ-Քաթիպային հետևելով, ասպարեզ ելան հայրենիքի ազատագրության վերաբերյալ մարտաշունչ երգերով:

Սուրբ ավետարանը ծալեցեք հայեր,
Ինքնապաշտպանության դրքեր կարդացեք,
Ժամանակը փոխվեց, վեր առեք զենքեր,
Տկարներին պաշտպանելու գնացեք:

Զիվանին արձագանքում է հայրենիքի և նրա ազատագրության դադափարի հետ առնչվող բազմաթիվ մեծ ու փոքր իրադարձությունների՝ տասնյակ երգ-ոտանավորներ հորինելով ռուս-թուրքական պատերազմի, պատերազմից հետո ստեղծված հեղափոխական իրավիճակի, բալկանյան ժողովուրդների ազատագրության, Բեռլինի վեհաժողովի, ղեկավարների ապստամբության, հայկական կոտորածների և շատ այլ հարցերի վերաբերյալ: Զիվանին մանրամասնորեն ու կրքոտ կերպով անդրադարձել է այդ ինդիքներին: Պետք է նշել հատկապես նրա «Սգվոր կույսին», «Կլանքի դասը», «Մինչ երբ», «Հոտ տառը», «Մեծ քեռին» երգերից մինչև «Իմ հորթը», «Սասունցիք», «Իմ կարծիքը», «Ժողովուրդ» երգերը: Եվ Զիվանին հանդես բերեց նախանձելի հայրենասիրություն.

Զիվան, ազգիդ հավատարիմ ծառայի,
Տեղը եկավ մինչև կյանքդ ընծայի:

Մեր ժողովրդի շատ սիրելի և ամենամասնական երգերից է «Հայի հուտ» ստեղծագործությունը: Այնտեղ չկան բանաստեղծական պերճ պատկերներ: Ջիվանին երգը կառուցել է հայրենիքի հանդեպ խանդավառության մի այնպիսի զգացումով, որ անմիջապես վարակում է ընթերցողին: Ուշագրավ է մանավանդ հայրենիքի տեսլացած պատկերը՝ վաղնջական ժամանակների ողբերգական գույներով պատկերված:

Դու այն երկրեն մի հեռանար, հայի հուտ,
Ուր որ նախնիքներդ հիշատակներ կան,
Մրրած ժամանակդ կբաղես օդուտ,
Դեռ մոխրի մեջ թաղված հին կրակներ կան:

Ընկաված երկիրդ սուրբ է, հայ եղբայր,
Հայի արյունով ներկված է ամեն քար,
Զոհվել են հավատի և ազդի համար,
Պառկած հաղարավոր նահատակներ կան:

Ջիվանին երբեք չի դադարի մեր ժողովրդի ամենասիրելի բանաստեղծաշուրջը համարվելուց, հեղինակը լինելով հայրենասիրական այնպիսի հոյակապ երգերի, որպիսիք են՝ «Միրանի ծառ», «Աղդ իմ որքան նկուն մնաս», «Անի» և այլն:

Որքան հմայք ու թովչանք կա հեթանոս ժամանակների հետ խոսող և մեր ժողովրդական «Կարոս խաչն» ու «Մոկաց Միրդան» հիշեցնող այդ անպուշտական երգի մեջ:

Ես մի ծառ եմ ծիրանի,
Հին արձատ եմ անվանի,
Պտուղներս քաղցրահամ
Բոլոր մարդկանց պիտանի:

Աշուղի շատ սիրված երգերից մեկն է «Աղդ իմ, որքան նկուն մնաս» գուրջվոր Ամեն ինչ պարզ ու իմաստուն է այս երգի մեջ՝ սկսած ուսման հույսի և էությունը համակող հոգևհույզ բառերից մինչև հայրենասիրական բարձր պաղափարը:

Քեզ չեմ մոռանա հավիտյան
Հարազատ մայր իմ Հայաստան,
Թեկուդ դրախտն էլ ինձի տան,
Սիրտս քեզինք չի դատվի:

Ջիվանու հայրենասիրական երգերը երբեմն ունեն խիստ ընդգծված բարոյախրատական բնույթ: Կան նաև այնպիսիները, որոնք մի տեսակ տարուբերվում են հայրենասիրական ու բարոյախրատական երգերի միջև: Այդ կարգի երգերից է հանրածանոթ «Ձախորդ օրերը», որը ոչ միայն Ջիվանու, այլև մեր դասական դրականության ամենաշողողուն քերթվածներից մեկն է: «Կուղան ու կերթան», — այսպես է այդ երգի իսկական վերնագիրը: Բայց «Ձախորդ օրեր» հորջորջումն այնքան արդեն տարածված ու մասնականացված է, որ երգն ամենուրեք հայտնի է այդ անվան տակ:

Առաջին հայացքից շատ սովորական և վաղուց հայտնի այն ճշմարտությունն է ընկած այս երգի հիմքում, թե ոչինչ կյանքում հավիտենական ու անփոփոխ չէ: Աշուղը նկատի ունի բացասական իրողություններ, որից երեվում է, թե երգը հորինված է միտումով: Աշուղական պոեզիայի անձուկ սահմանները չեն խանգարել հեղինակին կատարելու հանճարեղ ընդհանրացումներ:

Ձախորդ օրերը ձմռան նման կուղան ու կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենան, կուղան ու կերթան...

Գալով զուտ բարոյախրատական երգերին, պետք է ասել, որ Ջիվանին այստեղ արդեն չունի իր մրցակիցը: Նախորդ շրջանի մեր նշանավոր աշուղները (Շիրին, Ազբար-Ադամ, Սեյադ, Նիրանի, Զարգար, Մալուլ) ստեղծել են ընդհանուր, եթե կարելի է այսպես ասել՝ քարոզչական բնույթի բարոյախոսական երգեր, ամենևին հոգ չտանելով մասնավորելու այն գաղափարը, որ քնկած է այդ երգերի հիմքում: Ընդհանրապես դաստիարակիչ, բայց ճանաչող այդ երգերի կողքին Ջիվանին ստեղծում է առօրեական ու դիզակտիկ երգեր՝ կենցաղային ամենաբազմազան թեմաներով: Ապշել կարելի է խրատական երգերի այդ բազմազանության վրա: Ինչ որ բնորոշ ու տիպիկ է հայ մարդուն՝ սկսած նրա աշխատանքալիս առօրյայից մինչև տրամաբանության բարձր ոլորտները, առկա է դրանցում՝ իր անթիվ ու անհամար մանրամասների մեջ՝ ընկերություն, ազնվություն, հավատարմություն, նվիրվածություն, անձնագոհություն, ազատություն, անարդարություն, չկամություն, ժլատություն, ապերախտություն, հոգս, ցավ, վիշտ, կարիք, տառապանք, զրկանք և դեռ՝ հարևանություն, բարեկամություն, ծնողասիրություն, որդիասիրություն և այլն:

Ջիվանին հեղինակ է անթիվ ու անհամար այնպիսի երգերի, որոնցում խրատը ոչ թե ընդհանրապես բարոյախոսական քարոզ է, այլ որևէ կոնկրետ իրադարձության վերարտադրություն: Ավելորդ կլիներ այդ երգերն այստեղ մեկ առ մեկ թվարկել: Առաջին իսկ տողերից հայտնի է դառնում այդ երգերի բովանդակությունը, ոչ այնքան հարուստ ու բազմազան է. ոչքան հարուստ ու բազմազան է կյանքը: Այսպես օրինակ.

Անցած բանի համար ցավելն իզուր է,
Օգուտ չի տալ բեղի, եղածն եղել է.

կամ՝

Այլոց տունը բեղ օթևան չի լինի,
Աշխատիք բեղ համար օթևան ճարե.

Ջիվանու լայն ժողովրդականությունը մի ինչ-որ չափով պայմանավորված էր նաև նրա երգիծական բնույթի ստեղծագործություններով: Մեր մեծ աշուղն օժտված էր նաև երգիծելու անսպառ կարողությամբ:

Նրա գրչին է պատկանում հայ երգիծական պոեզիայի մի այնպիսի զուխգործոց, ինչպիսին է հանրահայտ «Խելքի աշեցեքը»: Իր տեսակի մեջ բացառիկ մի ստեղծագործություն, որ կարող է պատիվ բերել ցանկացած բանաստեղծի: Անհամատեղելի, իսկ երբեմն էլ պարզապես հակոտնյա երեվույթների հակադրությամբ Ջիվանին հանգում է սոցիալ-քաղաքական լուրջ հետևությունների: Կարելի կլիներ խոսել նաև Ջիվանու սիրային երգերի մասին, քանի որ մեր աշուղը հեղինակ է «Հայ աղջիկ», «Սևիկ աչեր» և մանավանդ «Պաղ աղբյուրի մոտ» գողտրիկ երգերի, բայց այդ դեպքում մենք քիչ բան կունենանք ասելու բանաստեղծ Ջիվանու օգտին, որի տաղանդն իր ողջ ուժով ու խորությամբ փալատական հալ աշուղական գրականության փառքը կազմող խոհափիլիսոփայական, բարոյախրատական, սոցիալական և հայրենասիրական երգերի մեջ: